ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

30.07.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երեւան

2025 թվականի հուլիսի 30-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը և Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2025 թվականի մշտադիտարկման արդյունքների ներկայացում (40 անձի վերաբերյալ),
2. Մեդիա հրապարակման հիման վրա պաշտոնատար անձանց՝ շահերի բախման վերաբերյալ իրականացված ուսումնասիրության ներկայացում,
3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումն ընդունելու հարցի քննարկում,
4. Կուսակցությունների տարեկան հաշետվությունների թվայնացման աշխատանքների ժամանակ ի հայտ եկած առերևույթ խախտումների հիման վրա այդ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում նախաձեռնելու հարցի քննարկում:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է ևս թվով 40 պաշտոնատար անձի, որոնց նկատմամբ

կատարված ուսումնասիրության արդյունքները ներկայացվեց Հանձնաժողովին: Հարցի շրջանակներում ներկայացվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական Ալբերտ Աբգարյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները, որի արդյունքում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կարեն Սարգսյանի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

Պետական վերահսկողական ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրության արդյունքները ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը: Հարցը վերաբերում էր Ռոմանոս Պետրոսյանի՝ «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի, իսկ նրա կնոջ կողմից՝ նույն ՊՈԱԿ-ում կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրենի պաշտոնները զբաղեցնելուն: Մանրամասները ներկայացնելուց հետո Հանձնաժողովը՝ հաշվի առնելով, որ թեև կնոջ պաշտոնի ստանձնման պահին Ռոմանոս Պետրոսյանը դեռ զբաղեցնում էր Կոտայքի մարզպետի պաշտոնը, ՊՈԱԿ-ի փոխտնօրենի նշանակման գործընթացում մարզպետը ի պաշտոնե չունի/չի ունեցել որևէ ներգրավվածություն, ինչպես նաև Խորհրդում ներգրավվել է ավելի ուշ, քան վերջինիս կինը ստանձնել է փոխտնօրենի պաշտոնը, հետևապես Ռոմանոս Պետրոսյանի կողմից հնարավոր շահերի բախման վարույթի հարուցման հիմքեր առկա չեն, որոշեց ավարտել ուսումնասիրությունը:

Արսեն Աղաբաբյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրության արդյունքները ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը, որի մանրամասների ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց շահերի բախման առերևույթ խախտման վերաբերյալ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

Տիգրանուհի Խալաֆյանը ներկայացրեց նախորդ նիստի ընթացքում դեռևս քննարկված «Ապրելու» հիմնադրամի կողմից համայնքներին նվիրատվություն

կատարելու առնչությամբ ուսումնասիրության արդյունքները, որի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիրությունը՝ խախտում չարձանագրելու հիմքով:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Տիգրան Ծատուրյանը, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը և ուղարկել պաշտոնական հրապարկման:

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց Տիգրան Ծատուրյանը, որի շրջանակներում ներկայացվեց «Ուժը հայրենյաց», «Գործարար», «Ռամկավար ազատական», «Հայաստանի եվրոպական», «Հաղթանակ», «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվություններում արձանագրված առևերույթ խախտումը: Քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց սկսել ստուգում նշված կուսակցությունների համար, այդ թվում նաև՝ աուդիտի ենթարկված «Ապրելու երկիր», «Հայրենիք» և «Հայաստանի հանրապետական կուսակցություն»՝ զուգահեռ ստուգելով նաև 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Ալբերտ Աբգարյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:
2. Կարեն Սարգսյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:
3. Ասլան Ավետիսյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:
4. Ռոմանոս Պետրոսյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրությունն ավարտել:
5. Արսեն Աղաբաբյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:
6. «Ապրելու» հիմնադրամի կողմից համայնքներին նվիրատվություն կատարելու առնչությամբ ուսումնասիրությունն ավարտել:

7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումն ընդունել:

8. Սկսել ստուգում «Ուժը հայրենյաց», «Գործարար», «Ռամկավար ազատական», «Հայաստանի եվրոպական», «Հաղթանակ», «Սահմանադրական իրավունք միություն», «Ապրելու երկիր», «Հայրենիք» և «Հայաստանի հանրապետական կուսակցություն» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների վերաբերյալ՝ զուգահեռ ստուգելով նաև 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**